Պրոլետարներ բոլոր յերկրների, միացե՛ք

ԱՆԴ. ԻՐԿՈՒՏՈՎ

ԱՄՐԱՊՆԴԻՐ ԽՈՐՀՐԴՆԵՐԸ

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

Ազգային Փոքրամասնութ. Հ. Կովկասի
Յերկրային Հրատարակչություն

Ռոստով Դոն 1930

ՔԱՂ.-ՏՆՏ. ԿԱՄՊԱՆԻԱՆԵՐԻՆ ԳԵՂԱՐՎԵՍՏՈՎ ՍՊԱՍԱՐԿ
Հ. Կ. ՑԵՐԿՐԱՑԻՆ ՇՏԱԲ

C 1278
346
19 NOV 20
891.71
Ի-93

ԱՆԴ. ԻՐԿՈՒՏՈՎ

ԱՄՐԱՊՆԴԻՐ ԽՈՐՀՐԴՆԵՐԸ

(ԽՈՐՀՐԴՆԵՐԻ ՎԵՐԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԱՌԹԻՎ)

Ազատ փոխադրեց Մ. ՓԻՐ

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

*Ազգային Փոքրամասնութ. Հ. Կովկասի
Ցերկրային Հրատարակչություն*

Ռոստով Դոն — **1930**

29 APR 2013

11377

Андрей Иркутов

КРЕПИ СОВЕТЫ

ПЬЕСА НА АРМЯНСКОМ ЯЗЫКЕ

ՊԵՏ ԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ГОС. БИБЛИОТЕКА
ՀՍՍՌ-Арм. ССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

59431-66

КРАЙНАЦИЗДАТ

Газ.-кн. тип. ОККПО.Ст.-форм. А6—148 x 105 м/м.
Ростовдон Крайлит 1146 Зак. № 1095—1500

25 SEP 2006

ԱՄՐԱՊՆԴԻՐ ԽՈՐՀՐԴՆԵՐԸ

ԴԱԽԱՌԱՆ

Բեմի վրա տեղական հին տարազով աղքատ հագնված մի ծերուկ։ Հազիվ քայլելով, անցնում է տնից-տուն ու յերկար ձեռնափայտով թակում դռներն ու պատուհանները։

Ծերուկ. *Ժողովի հրամեցեք, հրամեցեք ժողովի* (կանգ է առնում, յերկար չիբուխը վառում ու նույն դանդաղ, քայլվածքով առաջ շարժվում)։ *Ժողովի հրամեցեք* (կանգ է առնում, մեկ տրեխը հանում, բրդի գուլպան խնամքով ուղղում ու քայլում առաջ), *ժողովի, ժողովի, ժողովի հրամեցեք* (կանգ է առնում, նույն դանդաղ գործողությունը մյուս տրեխի ու գուլպայի հետ)։

Ցերիտասարդ (բեմ դուրս գալով). *Պապի, այ պապի, եղ դու մինչև կես գիշեր էլ չես վերջացնի։*

Ծերուկ. *Հե՛, ի՞նչ, ի՞նչը չեմ վերջացնի։*

Ցերիտ. Գեղացոց հավաքել մինչև կես գիշեր
եվ չես վերջացնի ասում եմ. թափով շարժվիր,
տեմպով։
Ծերուկ. Ի՞նչ...
Ցերիտ. Թափով շարժվիր, ասում տեմպ առ։
Ծերուկ. Ի՞նչ առնել. եդ ինչ բան ե... կոոպե-
ռատիվումն են տալիս։
Ցերիտ. Տեմպ, պապի, արագություն։ Շտապել
պետք ե, հասնել. արագ, արագ։
Ծերուկ. Շտապե՞լ, ո՞ւր շտապել, ինչի՞ շտապել.
Ցերիտ. Ինչու. նայիր ծերուկ, շուրջդ բոլոր,
Արթնացիր ու աչքերը բաց.
Նայիր ծերուկ, վոնց ենք աճում,
Մեր նոր կյանքն ենք մենք կառուցում։

Ես վայրենի սար ու դաշտում,
Ուր վոչխարն եր ծույլ արածում,
Կառուցվել են գործարաններ,
Հեքյաթական նոր հսկաներ։
Եվ չես տեսնում բաժան հողեր,
—Սահմաններն են վոչնչացվել։

Պապենական խարխուլ բունը,
Քանդում ե կոլեկտիվը.
Հնգամյակը—չորս տարվա մեջ
Իրացնում են խորհուրդները։

Ծերուկ. Ե լավ. եդ իմ բանը չի. շտապելն ինձ
չի սազի. խալխին կկանչեմ ժողովի ու հերիք ե։
Ցերիտ. Պապի, բա եդպես կկանչե՞ն։
Ծերուկ. Բա վո՞նց.
Ցերիտ. Կանչել պետք ե բարձր, պետք ե շարժվել
արագ, խորհրդների վերընտրության ամենքին
պետք ե կանչել։

(Խոսափողը—рупор ը ուղղելով դեպի դահլիճ)

Գյուղացիք, ձեզ եմ ասում յես.
Խորհրդների վերընտրության լինենք ամենքս.
Ծխոտ խրճիթում չնստենք, վոնց վոր մկներ,
Լսո՞ւմ եք, ընկերներ։
Դահլիճից. Լսում ենք։
Ցերիտ. (Ծերուկին) Եսպես կանչել խելքիդ չե-
կա՞վ.
Ծերուկ. Ե՜հ, եդ աղմուկն ել քեֆիս չեկավ.
մենք սովոր ենք, վոր լուռ լինի. տարե-ցտարի
եդպես ե մերը։
Ցերիտ. Հին ադաթը պիտի թաղենք,
Արտն ել այլ կերպ պիտի վարենք։
Են տարիներն անցան հիմի.
Մեր ես տարին՝ ել հինը չի։
Ծերուկ. Եդ ի՞նչ տեսակ տարի յե վոր.
Ցերիտ. Եսպես տարի քի՞չ ե, պապի,

Չի մոռացվի հաղթը տարի.
Հնգամյակի յերրորդ տարին,
Հաղթանակի տարի լինի։
Պիտի շինվեն գործարաններ,
Վոր տան մաշին ու տրակտորներ։
Գեղացոց լայն ճամբա կանչենք,
Դյուղերը մեր համատարած
Կոլխոզ ունենք, տրակտորի լուսը վառենք։

Ծերուկ. (ուշադրությամբ լսում եր)
Հէյ, բալաս վոնց լինի վոր
Յերկար ապրենք.
Մեր աչքերով լուսը տեսնենք։

Յերիտ. Ջահելացէր, պապի,
Տխրությունդ թափ տուր,
Ջահել կյանքով ապրի։

Միասին (կայտառ).
Խորհրդները մեր թե ամուրլինեն,
Մասսաների գլուխ թե կանգնած լինեն,
Բանվոր դասակարգ, դյուղացիություն,
Կիրագործեն մեծ շինարարություն։

Ընտրենք մենք պատգամավոր,
Իսկական աշխատավոր.
Նորընտիր խորհրդում նա

(Բեմից ցույց տալ գյուղխորհրդի այն անդամների

կարիկատուրային նկարները, կամ պլակատի վրա գրած ազգանունները, վորոնց կհարմարվեն ներքեվ բերած ասացվածքները)։

Անդամ լինի գործունյա։

Վարպետին բան չես սովորեցնի,
Առանց ձեզ էլ գիտուն ենք.
Աշխատանքից խուսափելով,
Թախմի վրա կթավալվենք։

Ցես, ընկերներ, խելքս
Հացի հետ եմ կերել.
Ցերեք որ ու գիշեր,
Բանաձև եմ գրել։

Մազեր յուղած, լով սափրված,
Աղջիկների թեը մտած.
Ամենայն որ մենք ման կգանք,
Ինչ ենք անում գործ, աշխատանք։

Ասում են մազը յերկար,
Կնկա խելքը կարճ կլինի.
Համա՛ յես կնկա մասին,
Եզպես բան հեչ չեմ ասի։

Դպրոցի, լիկկյանի
Մասին սա հոգ կտանի.

Շեն կենա գյուղխորհրդի
Գիտակից անդամը սա։

Ցերիտ. Ես, ընկերներ մի նախաբան,
Հիմի անցնենք ներկայացման.
Ներկայացման նյութը լինի—
Հին խորհրդի հաշվետվություն,
Նոր խորհրդի վերընտրություն։
Նայեք, լսեք,
Առաջին մաս։

(Պարզում են մեծ լենտ-պլակատ—«Ակտիվ մասնակցենք խորհրդի վերընտրության»)

ՎԱՐԱԳՈՒՅՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

ԳՅՈՒՂԽՈՐՀՈՒՐԴ, ՀԱՇԻ՛Վ ՏՈՒՐ

Բեմ են դուրս գալիս 5 հոգի, վորոնցից 2-ը կին. Նրանք կանգնում են լենտ պլակատի յետևը, այնպես վոր նրանց վոտներն ու գլուխը յերևա։

Հինգը միասին.
Խորհուրդն աշխատել ե տարուց ավելի,
Ժամանակը սա, իհարկե, քիչ չի.
Յեկեք պահանջենք հաշիվ՝ խորհրդի
Վողջ աշխատանքի։
Հարցեր կտանք մենք,
Մեկը մյուսից լուրջ.
Իսկ դուք դահլիճից
Կպատասխանեք։

Առաջինը. (Կախելով պլակ.—«Կոլտնտեսություն»)
Ընկերներ, տվեք պարզ պատասխան,
Կարողացա՞վ գյուղխորհուրդը
Կոլխոզշարժումը գլխավորել,
Ես խնդիրը պարզելու համար
Ներկայացուցչին պետք ե լսել։

(*Բեմ է դուրս գալիս գ.-խորհրդի ներկայացուցուցիչը, վորը փաստեր ու թվեր պարունակող, կոլխոզի աշխատանքը լուսավորող, այս զեկուցումը նախապես ու գրավոր պետք է պատրաստի այն հաշվով, վոր 2-3 բոպեյից ավելի չտևի զեկուցումը։*

Ստորև կոլխոզշինարարության գնահատականը յերկու վարիանտով է տրվում. առաջինը՝ յերբ գ.-խորհրդի աշխատանքի այս բաժինը լավ է կատարված. յերկրորդ վարիանտը՝ յերբ վատ է աշխատանք տարված. վարիանտի ընտրությունը անել՝ յելնելով տեղի դրությունից)։

ԱՌԱՋԻՆ ՎԱՐԻԱՆՏ

Գյուղխորհրդի Ներկայացուցիչը վերջացնելով խոսքը, հեռանում է բեմից. Ներս է գալիս յերիտասարդը։

Յ ե ր ի տ. (*Հանդիսականներին*).

Նա վերջացրեց իրա խոսքը.
Առաջարկենք՝
Չվերջանա աշխատանքը։
Ապրեք տղերք, լավ գործել եք.
Ենպես, ինչպես մինչև հիմա—
Կոլխոզշարժում գլխավորեք,
Մեզնից ձեզի հաստատ ցուցմունք
Իրագործեք Լենինի ցուցմունք։

ՅԵՐԿՐՈՐԴ ՎԱՐԻԱՆՏ

Գյուղխորհրդի Ներկայացուցչի դուրս գալուց հետո բեմ են մտնում յերիտասարդ է Ծերուկ։

Յ ե ր ի տ. *Եսպիսի խորհուրդ մեզ պետք չի. պետք է իսկական, ամուր գ.-խորհուրդ, վորը կարողանա աշխատանքները ղեկավարել։ Ընկերներ, կոլխոզներին պետք է հաստատուն գ. խորհուրդ. ղեկավարող, ամրապնդող խորհուրդ։*

Ծ ե ր ո ւ կ. (*Ցույց տալով ներկայացուցչի ներացած կողմը*) *դու նրա վրա մի բարկանա, նա սխալվել է։*

Յ ե ր ի տ. *Եդ սխալին թեքում կասեն,*
Վզակոթին էլ լավ կտան,
Յերբ խորհուրդը կխամփա՝
Ո՞ւմ քեֆը կլավանա։

Դ ա հ լ ի ճ ի ց. *Կուլակի։*

Յ ե ր ի տ. *Կոլխոզներին արթուն խորհուրդ պետք է. այո՞։*

Հ ա ն դ ի ս ա կ ա ն ն ե ր ի ց. *Այո, այո։*

Յ ե ր ի տ. *Ճի՞շտ է թե խորհուրդ պետք չէ։*

Հ ա ն դ ի ս ա կ ա ն ն ե ր ի ց. *Չէ։*

Յ ե ր ի տ. *Կպատասխանեք հաստատակամ,*
Ո՞վ պիտ ոգնե շարժումին կոլխոզական։

Հ ա ն դ ի ս ա կ ա ն ն ե ր ի ց. *Խորհուրդը։*

Յերիտ. Հին խորհուրդը կատարե՞լ ե իր գործը,
Հանդիսականներից. Վո՞չ:
Յերիտ. Հարցը պարզ ե ամենքին:
Յերկրորդը. (Պարզելով պլակատ—«Կուլակության վերացում»
Այժմ կանգնենք ես հարցի վրա,
Վոր ժողովրդին հուզում ե հիմա.
Գյուղխորհուրդը մեր շատ բան ե արել,
Կուլակության դեմ նա լավ ե կռվել:

(Հանդիսականների պատասխան ստանալուց հետո դուրս ե գալիս գ. խորհրդի ներկայացուցիչը և նախորդ կարգով կուլակության վերացման գործի մասին զեկուցում ե. հետո, ըստ եյության յերկու վարիանտներից մեկը՝ լավը կամ վատ գնահատական տվող):

Յերրորդը. (պարզելով պլակ.—«Հացամթերում»)
Հիմա ընկերնե՛ր. արագ ու վարպետ
Պատասխան տվեք.
Վո՞նց ե կատարվել հացամթերման
Մեր մեծ կամպանիան:
(Հանդիսականների պատասխան՝ լավ կամ վատ)
Չորրորդը. (Պլակատ— «Ընդհանուր պարտադիր ուսում»):
Ես հարցի մասին Սովնարկոմը մեր

Դեկրետ բաց թողեց: Դուք ի՞նչ եք արել:
Դպրոցը տաք ե,
Չունևոր տղան կոշիկ հագած ե,
Նախաճաշ կուտե՞,
Գիրք, տետրակ ունե՞ն.
Աղջիկ ու տղերք
Լա՞վ ուսում կառնեն:

(Հանդիսականների պատասխան՝ այո կամ վոչ)

Հինգերորդը. (Պլակատ— «Հնգամյակը—չորս տարում» փոխառություն):
Մեր հարցերը ճշգրիտ ու սուր,
Պատասխան տվեք դուք ընդհանուր.—
Փոխառության կոնտրոլ թիվը
Լրացվե՞լ ե մեր գեղումը:
(Հանդիսականների պատասխան՝ այո կամ վոչ)

(Պլակատներ պատրաստել յեթե հնարավոր չի յեղել, ապա 5-ից ամեն մեկը, հաջորդաբար, ասում ե այն՝ ինչ կազմում ե պլակատի բովանդակությունը):

Հինգը միասին.
Իսկ հիմա ասեք պատվով, ճշմարիտ,
Գ.-խորհուրդը մեր չքավոր-միջակ գյուղացիների
Ցավերը գիտե՞ր. եդ մասսաների գլուխն անցած

Առաջ տանում եր գործը սովետի։
—Ո՞վ ճիշտը կասի։

(Հավանաբար դահլիճից և դրական և բացասական պատասխան կտան։ Ցերը պատասխանները կսպառվեն, 5 ն ել տակտով դուրս կգան լենտպլակատի յետեից ու կանգնած առաջաբեմում, միասին, առանց կանչելու, ընկերական նկատողության տոնով կարդում կամ ասում են հետեվյալը)։

Իհարկե, դժվար չե ախ ու վախ անել,
Գովել և կամ թե մի լավ հայհոյել—
Թե նա քնած է կամ շատ արթուն է,
Սխալներ ունի, անսխալական է։
Ե՞յ, բաբեկամներ, յերբ ընտրում եյինք,
Վո՞րտեղ եյիր դու՛ կամ թե նա.
Ձեռք բարձրացրինք ու պրծավ գնաց։

Խորհուրդը մեզ վրա թե հենված լինի,
Մենք ել նրան ոգնենք մեր կրցած չափով,
Են ժամանակ նոր, խորհուրդն իսկական
Գործ կանի՝ գովքի ու պատվի արժան։

Դու չե՞յիր և դու՛ և կամ դու, այ մարդ
Հասարակական գործից փախչում, վոնց կրանկ—
Իբր բանի յես կամ գլուխդ ե ցավում,

Ցերկու վոտ ունես, յերկուսն ել առնում
Հանձնարարությունից, ժողովից ծլկում։
Թե կուզեք խորհուրդ մեր լավ աշխատի՝
Ոգնեցեք նրան և պահանջեցեք,
Վոր գործի համար, ձեզ վրա հենվի։

(Նվագախումբը մարշ և նվագում։ 5-ը շրջան են անում բեմի վրա և ասում են (լավ ե ծանոթ ու հարմար յեղանակով յերգել)։

Առաջինը. Մենք յերեկ հորանջելով,
Պատգամավոր ընտրեցինք,
Ընտրեցինք ու մոռացանք,
Հոգեհանգիստ կատարեցինք։

Ցերկրորդ. Խորհրդին յես ոգնում եմ,
Որն ի բուն հայհոյում եմ.
Կնիկ ու հարս և հեր ու մեր.
Ահա եսպես յես ոգնում եմ։

Ցերրորդ. Պատգամավոր լինել լավ ե,
Պատվավոր ու մեծ բան ե.
Համա յերբ հաշիվ ուզեն,
Ասելու յես հիչ բան չունեմ։

Չորրորդ. Խորհուրդ արեք ամենքդ,
Թե ում դուք պիտի ընտրեք
—Ենպես մարդ, վոր աշխատի
Խորհրդներին պաշտպան կանգնի։

Հ ի ն գ ե ր ո ր դ. Կուլակին մենք դուրս քշենք,
Արմատներն էլ կտրենք.
Ջուխտոր, միջակ ընտրենք,
Բատրակ ու կին խորհուրդ ճամբենք։

(Յերբ վերջինն էլ հեռանում է, բեմ է դուրս գալիս յերիտասարդը)։

Յ ե ր ի տ. Խորհրդներին եսպես
Պաշտպան կանգնենք, սարի պես։
Այժմ տեսնենք, ընկերներ,
Ներկայացման յերկրորդ մաս։

БИБЛИОТЕКА ИНСТИТУТА ВОСТОКОВЕДЕНИЯ Академии Наук СССР

ՅԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ

ՈՒԺԵՂԱՑՐՈՒ ՅԵՐԿՐԻ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Յերկու կարմիր բանակայիններ, մարշի տակտով բեմ են դուրս գալիս։ Յերաժշտության տակ կատարում են մի շարք ռազմական վարժություններ հրացանով. վարժությունների վերջանալու հետ լռում է յերաժշտությունը։

5943/66

1-ին կարմիր բանակային. Իսկ դուք կարո՞ղ եք ձեռքում հրացան բռնել ուղիղ։

2-րդ կ. բանակային. Դուք կրակել գիտե՞ք, թե վոչ։

1-ին կ. բանակային. Ինչ ենք հարցնում. լավ է ստուգենք փորձով, փորձենք արագ հրացան քանդել և շուտ հավաքել։ Մրցում անենք ու վարպետին հրացան տանք։

(Հրացան քանդելու ու շուտ հավաքելու մրցում է կազմակերպվում 4-5 հոգուց. մրցման վերջում հաղթողը մի վորևե մրցանակ է ստանում ու նվագի տակ վերադառնում դահլիճ):

Մ ե կ ը դ ա հ լ ի ճ ի ց. Ես բանը չհասկացա, ինչի համար է սա։

1-ին կ. բանակային. Ի՞նչը չհասկացար։

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ Гос. Библиотека ՀԱՍԽ-Арм.ССР

Մեկը դահլիճից. Ես մրցումը, հրացան-մրցանը։ Մենք յեկել ենք վերընտրության, իսկ դուք խոսում եք պատերազմից։

2-րդ կ. բանակային. Ե, ինչ կա վոր։

Մի ուրիշ ձայն դահլիճից.

Դու, այ ախպեր, վարպետ ես,
Պատիվ արա, բացատրիր մեզ
Խորհրդների վերընտրության
Ինչու՞ հրացան առար յեկար։

1 ին կ. բանակային. Ինչու՞։ Շատ սիրով բացատրենք հիմա։

2 րդ կ. բանակային. Գյուղխորհուրդը մեր ռազմական պատրաստության հոգ պիտ տանի։

1-ին կ. բանակային. Թշնամին քնած չե. նա մեզ վրա ավազակի նման հանկարծակի կհարձակվի։ Ա՛յ, իմ ընկեր, մենք ամեն ժամ սպասում ենք պատերազմի, ամեն վարկյան պատրաստ լինենք ինքնապաշտպանության։

2 րդ կ. բանակային. Թշնամիներ մենք շատ ունենք, դրանց մասին այժմ կպատմենք։

1 ին կ. բանակային.

Աշխարհումս ֆաշիստներ կան
Ունեն ժանիք ու մեծ բերան.
Կոմունիզմի մեծ թշնամի,
Բարեկամ են կապիտալի։

2 րդ կ. բանակային.

Ձեռքին մառզեր, կրծքին մեծ խաչ
Բարկացած է Հռոմի պապը.
Որհնում է նա բուրժուաներին,
Իսկ բանվորին անեծք կարդում։

1-ին կ. բանակային.

Ահա և ձեզ ֆաշիստարար
Եդ յերկուսի ծառա խոնարհ,
Հին գեներալ, բանդիտ հիմա
Քանդում զավոդ ու ֆաբրիկա։

2-րդ կ. բանակային.

Զորառանք չինովնիկին,
Թղթերի մեջ կորած սարդին.
Փող ստանում, գործ չի անում,
Ցեկած տեղն ել ձեղ է խաբում։

Ցանկալի յե հաջորդաբար ցույց տալ ֆաշիստի, պապի և մյուսների խրտվիլակները կամ կարիկատուրային նկարներ։

Միասին. Մեր ասածները բոլորի համար,
Շատ կարևոր են ու շատ պետքական.
Խորհրդների շուրջ՝ սերտ շրջան կապեք,
Ցերկիր պաշտպանել մ՚ինչ պատրաստ յեղեք։

(Կրկին ցույց են տալիս մի քանի վարժություններ հրացանի վրա)։

Մեր ուժը միայն հրացանի մեջ չէ
Բանվոր, գյուղացու աշխատանքն է
Շեն անել յերկիրն ու պաշտպանության
Գործը ամրացնել։

Հնգամյա պլանը մենք իրագործենք
Շինարարությունը մենք առաջ տանենք.
Ցանքսը շատ անենք, յերկիր պաշտպանենք
Թշնամու ճակատը հարվածով պատռենք։

(Մարշի տակ յերկու կարմիր բանակայիններ դարձ կատարելով հեռանում են բեմից)։

(Բեմ է վազում քաղաքացի պաշտոնյայի պես հագնված մի մարդ. պորտֆելը կռնատակին, ձեռքին չեմոդան. մի քանի արագ ու խառն շրջան է անում բեմի վրա։

Ցերիտ. Ե՞յ, կանգնիր. կանգնիր է. ո՞ւր ես վազում։

Զեմոդանով մարդը. Դժբախտություն, դժբախտություն. ես ինչ պատահեց ինձ հետ։

Ցերիտ. Ի՞նչ է պատահել. ի՞նչ ես բղավում։

Զեմոդ. մարդը. (Արագ, շուտ ասելով)
Ցես խաղաղ աշխատում եյի կենտրոնում,
Հանկարծ՝ կենտրոնից ռայոն են ճամբում.

Ցես չեմ ուզում եսպես խուլ տեղ աշխատել,
Ցես մեծ գործերի համար եմ ծնվել։

Ցերիտ. Սպասիր, մնա, ռայոնում գործեր շատ կան.
Գործի համար մարդիկ չկան։

Զեմոդ. մարդը. Զեմ ուզում, չեմ ուզում
Կինս չի թողնում.
Ռայոնում ինչ ունեմ։

Ցերիտ. Ինչու։

Զեմոդանով մարդը.
Ցես ինչ անեմ խուլ տնկյունում,
Կինս, թատրոն չեմ մոռանում։
Քաղաք գնամ առնեմ պաշտոն,
Ծանոթ ունեմ, չեմ վախենում (փախչում է)։

Ցերիտասարդ.
Գյուղում աշխատելու ցանկություն չունի,
Իսկ քաղաքում նա շատ ծանոթ ունի
Սուտ հիվանդ դառած գործը կթողնե,
Կնկա փեշ բռնած կուրորտ պիտ վազե։

ՑԵՐՐՈՐԴ ՄԱՍ

ԿՈՒԼԱԿԻ ՏԵՂՆ ԵՍՏԵՂ ՉԵ

Նստած հանդիսականների միջից մեկը կանգնում է, անդադար ծափահարելով մոտենում բեմի առաջամասին, նա աղքատացած կուլակի տիպ է։

Կուլակ. Ճիշտ է. շատ ճիշտ է. հրաշալի յե։ Թանկագին ընկեր, ներողություն արիք ձեր անունն ու ազգանունը չգիտեմ, բայց վոնց յերևում է, ղեկավարներից եք։ Մի՞թե կարելի բան է պակասությունների մասին եղպես բաց խոսել։

Ցերիտ. Իհարկե. ինքնաքննադատությունը փականքի տակ չե. բոլոր բանվորները, բատրակները, չքավորները, բոլոր աղնիվ միջակները...

Կուլակ. Հենց դա, դա ինձ շատ հարմար է. աղնիվ միջակն այն է՝ ինչ վոր յես եմ։ Քաղաքացի՛, ընկեր, թույլ տվեք յես մի խոսք ասեմ։

Ցերիտ. Խնդրեմ. բարձրացեք բեմի վրա, վոր բոլորը ձեզ լսեն. խոսելու համար 5 րոպե կըտանք. խնդրում ենք ավելի ժամանակ չխլես։

Կուլակ. Ա՜յ քեզ բան. այ քեզ ինքնաքննադատություն (բարձրանում է բեմ)։ Ախր ինչի 5 րոպե. յես շատ բան ունեմ ասելու։

Ցերիտ. Լավ, լավ. խոսեք, խոսեք։

Կուլակ. Գյուղացի յեղբայրնե՛ր, եստեղ ցույց տվին, թե վոնց ամեն բան վատ է.—թե չինովնիկներ կան ու գեղից կփախչեն։ Ասին թե կովի վտանգ կա, քնած խորհրդներ կան, վոր մեկը ասեմ, վատ բաներ շատ կան. խոմ բոբիկներին, անվարտիկներին ձեռք չը...

Ցերիտ. Ախպերացու, կանգ առ. հապա, մութից դուրս արի, լուսով դեմքդ յերևա։

Կուլակ. Մի՛ խանգարի. մեզ մոտ խոսքի ազատություն կա։

Ցերիտ. Չե՛, ախպերացու. ազատ խոսքը ձեզ համար չե. յես քեզ հասկացա՛. ասում ես թե դու միջակ յե՞ս...

Կուլակ. Միջակ եմ հաստատ, մինչև անգամ չքավոր, նույնիսկ իսկական բատրակ. մինչև անգամ...

Ցերիտ. Ձայնից զրկված չե՞ս. ընտրական ձայն ունե՞ս։

Կուլակ. Հենց բանն էդ է, վոր չունեմ. կտրել են ձենս. մեկ հարցնող լինի ինչի՞ յեն կտրել։ Ասում են, թե ջրաղաց ունես. ասում են բանվոր ես պահում ու շահագործում. ախր ջրաղացը ամենի ոգուտի համար է։ Բանվորներն էլ իմ շատ մոտիկ ազգականներն են—մեկը՝ յոթը

պորտով հեռու. մեկելը պապիս քեռու թոռան թոռն ե։ Բա յես դրանց չպահեմ, հաց չտամ։ Ինարկե նրանք ձեռները ծալած նստելու չեն, ջրաղացում ինձ քիչ ու միչ պիտի ոգնեն։ Դրա համար, դուրս ե գալիս, վոր ձայնազուրկ եմ։ Հալալ հաց ուտեմ, ձայնազուրկ լինեմ. բա եղպես բան կլինի։

Ցերիտ. Հենց եղպես ել պիտի լինի։ Ես ժողովից մենք հիմա դուրս կխնդրենք, գնա բանիդ։

Կուլակ. Բանի վոր խնդրում ես... (գնում ե) համա...

Ցերիտ. (Դեպի դահլիճ)

Ընկերներ, լավ բացեք աչքերդ,
Ձայնազուրկներին ցույց տանք փակ դռներ.
Ասա գիտեք բոլորդ՝ ասպես աղվեսներ
Դռնից դուրս արվեն—պատուհանից ներս
կխցկվեն։

(Բեմի մյուս կողմից, դեկորացիայի պատուհանից կամ հուշարարի տեղից կուլակը գլուխը դուրս ե ցցում)։

Կուլակ. Մի խոսք կարելի յե։

Ցերիտ. Ջենդ կորի քանի ուշ չի.
Փասա փուսադ դու հավաքի՝
Մեր ժողովը քեզ հանաք չի.

Աշխատավոր ժողովրդի մեջը նստել—
Քո բանը չի։
Քանի ուշ չի,
Դե դուրս կորի։

Դահլիճից. Դուրս կորի։

Կուլակը. Ցես կգնամ, բայց խորհրդում ում պիտ ընտրեք

Առանց ինձի
Գյուղխորհրդի
Բանը բուրդ ե։

(կուլակը գլուխը յես ե քաշում ու հեռանում)

Ոպորտունիստ. (Դահլիճից)

Լավ չի, լավ չի
Նա ել մարդ ե
Քեզ ինչ դիպչել
Հիչ լավ բան չե։

Ցերիտ. Ա՛յ քեզ նոր բան.
Հապա արի դեմքդ ցույց տուր
Կուլակին ուրախ անել
Ու բարեգործ կուզես լինել։
Քո ուղածդ ասա, ինչ ե,
Ծրագիրդ դու մեզ պարզե։

Ոպորտունիստ. (Բեմ ե բարձրանում)

Մեր ծրագիրը բարդ չե շատ ել,

Հինգ խոսքով էլ կլինի ասել։
Կուլակի դեմ պետք է կռվել
Համա՛, համա՛... զգուշ լինել։

Ցես կոլխոզի թունդ պաշտպան եմ,
...Տասը տարուց... հեչ էլ դեմ չեմ։
Հնգամյակը շատ կսիրեմ,
Բայց չորս տարում... համաձայն չեմ։

Ցերիտ. (Ոպորտունիստին շուռ է տալիս, կրունակից հրելով բեմից դուրս է հանում)
Գնա գլուխդ քեզ հավաքի,
Հանգստացիր ու մտածի.
Վորոշ ասա՛ մեզ հե՞տ ես դու,
Թե բարեկամ ես կուլակի։

(Հանդիսականներին)

Հարկավոր չեն մեզ կուլակներ,
Ծուռտիկ-մուռտիկ բարեկամներ,
Զորոշդ մաստում մենք կպատմենք
Պատգամավոր թե ում ընտրենք։

Կուլակ. (Ներս մտնելով)
Ցես կգնամ.
Բայց մի ասեք՝ եղ ում
Պիտի խորհուրդ ընտրիք։
Առանց մեզի՝

Բուրդ է բանը
Գյուղխորհրդի։
Ցերիտ. Վախեցնում ես.
Դու լավ կանես,
Վոր տաղ անես.
Ում էլ ընտրենք
Քո գործը չի.
Զորոշդ մաստում
Հայտնի կանի։

ՉՈՐՐՈՐԴ ՄԱՍ

Ո՞Վ ԽՈՐՀՈՒՐԴԸ ԿԱՄՐԱՊՆԴԻ

Յերիտ. (Հանդիսականներին)

Հարց պիտի տամ յես մի քանի.
Ով վոր քաջ ե պատասխանի.
Ականջներդ լավ բաց արեք,
Բերաններդ ջուր մի առեք:
Ճիշտ պատասխան դուք ինձ տվեք —
Հին խորհուրդը աշխատե՞լ ե—
Չքավորների, բատրակների ցավին դարման
Ու ճար անի—
Գյուղի ընդհանուր գործին կանչի—
Նրանց խելքով կառավարվի:
Աղջիկներին ու կին մարդոց
Յենթարկե՞լ ե կազմակերպման,
Քաշե՞լ նրանց գյուղխորհրդի
Աշխատանքին—հասարակական:

(Յեթե հանդիսականների պատասխանը ԲԱՑԱՍԱԿԱՆ ե, չքավորի, բատրակի ու կնոջ միասին բեմ դուրս գալու ժամանակ յերիտասարդը ասում ե).

Յերիտ. *Ես յերեքն էլ հին խորհրդից*
Մոռացված են յեղել վաղուց.
Նոր խորհրդին մենք տանք պատվեր
Կապը նրանց հետ ամրացնել:

(Յեթե պատասխաններից պարզվում ե, վոր հին խորհուրդը բատրակների, չքավորների ու կանանց մեջ բավարար աշխատանք ե տարել, յերիտասարդը ասում ե հետեվյալը).

Յերիտ. *Գյուղխորհուրդը այ թե ում հետ*
Ձեռք տված ձեռքի աշխատել ե.
Վոնց վոր հալալ քույր ու ախպեր.
Մեր գործերն ե առաջ տարել:

Բատրակ, չքավոր և կին. (Հագնված տեղական տարազով). *Յերեքով եստեղ յեկել,*
Նոր խոսք մենք կասենք հիմա.
Խոսքը մեր թող տաք լինի
Ձեր սրտում թող միշտ մնա:

Կինը. *Են առաջվա յեղած բան եր,*
Կնոջ ձենը լսելի չեր.
Սովետի անդամ կլինենք
Տղամարդու հավասար ենք:

Չքավոր. *«Իմ բանը չի» յես չեմ ասի,*
Շարք կկանգնեմ կոլեկտիվի.

Հին աշխարհի տունը քանդվի,
Սոցիալիզմ շինենք պիտի:

Բ ա տ ր ա կ. Գեղ, քաղաքի պրոլետարիատ
Մեր ուժը մեծ է, անծեր, անափ.
Կոմունիզմի ճամբան բռնենք,
Յերկիրը մեր համատարած կոլխոզ
դարձնենք։

Մ ի ա ս ի ն և յ ե ր ի տ ա ս ա ր դ ը. (Մի շրջան անե-
լուց հետո)

Կոմկուսի հետ հաստատակամ
Առաջ շարժվենք դեպ ապագան.
Ո՞վ փորձի մեր դեմ կանգնել,
Կտապալենք. չխնայենք:

Խորհուրդները աշխատավոր
Ժողովրդի իշխանություն.
Հնգամյակի պաշտպան մարդկանց
Ընտրենք բոլորս միահամուռ։
Կոմունիզմի ճամբան բռնենք,
Յերկիրը մեր սովետական—
Համատարած կոլխոզ անենք,
Կապիտալի աչքը հանենք։

Յ ե ր թ ա. Պապիկնե՜ր, իմ տատիկներ,
Ահել, ջահել մեր ընկերներ.

Ներկայացումն էս վերջացավ.
Թե պակաս կար՝ իմ մեղքը չէր։

Տուն գնալով, լավ հիշեցեք
Ներկայացման իմաստն ու միտքը,
Ընտրությանը ակտիվ յեղեք,
Խորհուրդներին պաշտպան կացեք։

Гос. Библиотека
ՀՍՍՌ-Арм ССР
ИМ. А. МЯСНИКЯНА

ՀՀ Ազգային գրադարան
NL0317783

5394

11377

ԳԻՆՆ Ե 10 ԿՈՊ.

891.71
Ռ-93